

Եւսեբրիոսի և անոր շարունակողներուն խօսքերէն կը հասկըցուի որ Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցին և Զիթենեաց Լեւրան Աշակերտարանը համանմանութիւններ ունին: Անոնք միևնոյն ներշնչումէն ծնած են, միևնոյն խնամոց առարկայ եղած են և շինուած են միևնոյն ժամանակ: Մին և միւսն աւետարանական դէպքերով նշանաւոր բնական երկու այրերու փառաւորութեան նպատակը ունեցած են. ուխտաւորները իրենք խել քմբըռնած են նոյն երկու շէնքերու զուգութիւնը: Սօսք տանք Պորտոյի անանուն ուխտաւորին, որ 330 ին այցելեց Երուսաղէմ, երբ հազիւ աւարտած էին շինութիւնները. — «Դուք կ'ենէք Զիթենեաց Լեւոր, ուր մեր Տէրը աշակերտներուն իր վարդապետութիւնը սորվեցուց չարչարանքէն առաջ: Հոն եկեղեցի մը շինուած է Կոստանդիանոսի հրամանաւ». — «Անկէջ (Հաւքելի գերեզմանը) երկու մղոն դէպ ի ձախ Բեթղեհէմն է. ուր Տէրն մեր Յիսուս Քրիստոս ծնաւ: Հոն շինուեցաւ եկեղեցի մը Կոստանդիանոսի հրամանաւ»: Լսենք այժմ էթէրիան. — «Կ'աղօթեն այն եկեղեցիին մէջ որ կը կոչուի Աշակերտարան. հոն կը գտնուի այն այրը, ուր Յիսուս աշակերտաց սորվեցուց իր վարդապետութիւնը». — «Բեթղեհէմի եկեղեցիին մէջ արարողութիւններ կը կատարէին, նոյն եկեղեցիին մէջ է այն այրը ուր Տէրն մեր ծնաւ»:

Եկեղեցիին չափ այրն ու մսուրքն ալ գեղեցկօրէն կը զարդարէին: Յերոնիմոս իր նամակներուն մէջ ամենէն սրտառուչ և խանդավառ տողերը նուիրած է թէ՛ այրին և թէ՛ մսուրին փառաւորութեանը համար: Յիշեցինք արդէն թէ Որոգինէսի օրերէն ցոյց կու տային այրը և մսուրը: Յերոնիմոս Ծննդեան տօնին Բեթղեհէմի մէջ տուած իր մէկ քարոզին մէջ հետեւեալ կերպով կը խօսի մսուրի մասին. «Ահ, երանի թէ տեսնէի ա՛յն մսուրը ուր Տէրն մեր բազմեցաւ: Մենք Քրիստոսը պատուելու պատճառով հողէ մսուրը վերցուցինք անոր տեղ արծաթէ շինուած մսուր մը դնելու համար: Վերցուած մսուրը ինձ համար աւելի թանկագին էր: Ոսկին և արծաթը հեթանոսութեան համար են, բայց քրիստոնէական հաւատքը այս հողէ մսուրին արժանի է: Անիկա որ ծնաւ հոն, կը դատապարտէ ոսկին և արծաթը: Ես չեմ դատապարտեր սակայն զանոնք որ բարեպաշտութեամբ այդպէս վարուած են. բայց կը հիանամ Տիրոջը վրայ, որ թէպէտև աշխարհի արարիչը, կը ծնի ոչ թէ ոսկիին և արծաթին մէջ, այլ